

Թեմա 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ողջույն, ֆինանսական կրթության դասընթացի շրջանակներում այսօր խոսելու ենք ապահովագրության մասին:

Ապահովագրությունը ֆինանսական գործիք է, որի միջոցով մենք՝ մարդիկ կամ կազմակերպությունները, կարող ենք մեր ռիսկերի մի մասը փոխանցել մասնագիտացված ֆինանսական կառույցներին՝ ապահովագրական ընկերություններին: Այսինքն, ապահովագրությունը հնարավորություն է տալիս այս պահին կատարելու ոչ շատ մեծ ծախսեր, սակայն ապագայում հնարավորություն ունենալու ստանալ ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած մեծ ծախսերի հատուցում:

Եկեք ծանոթանանք ապահովագրության հետ առնչվող հիմնական հասկացություններին:

Ապահովադիր անվանում են բոլոր նրանց, ովքեր ապահովագրական ընկերության հետ կնքում են ապահովագրության պայմանագիր և վճարում են ապահովագրավճար:

Ապահովագրավճարը ապահովադրի կողմից կատարվող մուծումներն են:

Ապահովագրվող ռիսկերը բոլոր դեպքերն են, որոնց դեպքում նախատեսվում է փոխհատուցում:

Բացառությունները ներառում են այն կետերը, պայմանները, որոնց դեպքում փոխհատուցում չի տրամադրվելու:

Ապահովագրական գումարն այն առավելագույն հատուցման գումարն է, որը հնարավոր է ստանալ տվյալ պայմանագրի շրջանակներում որևէ պատահարի ի հայտ գալու դեպքում:

Փոխհատուցման չափը կախված է կրած վնասի չափից և պայմանագրով նախատեսված փոխհատուցման մասնաբաժնից:

Վնասի հատուցման կարգը սահմանում է այն գործողությունների հաջորդականությունը, որոնք անհրաժեշտ է կիրառել պատահարի տեղի ունենալու դեպքում՝ փոխհատուցումը ստանալու համար:

Ըստ տեսակների ապահովագրությունը լինում է կամավոր և պարտադիր:

Կամավոր ապահովագրությունը ձեր ցանկությամբ ապահովագրական ընկերության հետ ապահովագրության պայմանագրի կնքումն է:

Պարտադիր ապահովագրությունն օրենքով սահմանված պահանջ է ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագրի կնքելու վերաբերյալ:

Հայաստանում այսպիսի ապահովագրության օրինակ է ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասներից բխող պատասխանատվության ապահովագրությունը, բոլորիս քաջ հայտնի ԱՊՊԱ-ն:

Կարելի է առանձնացնել ապահովագրության 4 հիմնական ճյուղեր: Դրանք են՝

- անձնական ապահովագրությունը,
- գույքային ապահովագրությունը,
- պատասխանատվության ապահովագրությունը և
- տնտեսական ռիսկերի ապահովագրությունը:

Անձնական ապահովագրությունը վերաբերում է մարդուն՝ նրա կյանքին, առողջությանը, աշխատունակությանը և նրա հետ կապ ունեցող այլ իրադարձություններին: Նման օրինակ կարող են լինել առողջության ապահովագրությունը, դժբախտ դեպքերի և հիվանդությունների ապահովագրությունը և այլն:

Գույքային ապահովագրությունը բնութագրվում է նրանով, որ ապահովագրման օբյեկտ է գույքը:

Գույքի ապահովագրության միջոցով ապահովագրության ենթակա են, օրինակ, բնակարաններ, առանձնատներ, բնակարանների և առանձնատների ներքին կահավորանք, առևտրային շենքեր, շինություններ, գործարաններ, արտադրամասեր, արտադրական սարքավորումներ և այլն:

Այս ապահովագրությունը նախատեսում է հատուցում ապահովագրված գույքին հասցված վնասների և կորուստների դեպքում, ինչպես օրինակ՝ հրդեհի, կայծակի հարվածի, պայթյունի, փոթորիկի, կարկուտի և արտաքին ազդեցության այլ ռիսկերի դեպքում:

Պատասխանատվության ապահովագրությունը երրորդ անձին անզգույշ կամ ոչ միտումնավոր կերպով պատճառված վնասների ապահովագրությունն է: Նման օրինակ է շինմոնտաժային կազմակերպությունների կողմից երրորդ անձանց կյանքին

և առողջությանը հասցված վնասների գծով պատասխանատվության ապահովագրությունը:

Տնտեսական ռիսկերի ապահովագրությունը գործնականում ավելի հաճախ հանդիպում ենք ձեռնարկատիրական ռիսկեր անվամբ: Նման ռիսկի օրինակ է արտադրական գործունեությամբ զբաղվող կազմակերպության շահույթի թերստացումը կամ կորուստը, որը պայմանավորված է մեքենաների ու սարքավորումների թերբեռնվածությամբ, գործադուլներով, ռեսուրսների անբավարար մատակարարմամբ և այլն:

Այժմ քննարկենք բիզնեսին առնչվող ապահովագրության մի քանի տեսակներ.

Բեռների ապահովագրություն. նման ապահովագրությունը թույլ է տալիս փոխհատուցել ֆինանսական վնասները, որոնք առաջացել են բեռնափոխադրման ընթացքում բեռի կորստի, վնասման կամ ոչնչացման հետևանքով այն պայմաններում, որոնք կախված չեն բեռի սեփականատիրոջից:

Հնարավոր է ապահովագրել ցամաքային, օդային, և այլ տրանսպորտի տեսակներով փոխադրվող ցանկացած գույքը (բեռը):

Օրինակ՝

- արդյունաբերական մեքենաներ և տրանսպորտային սարքավորումներ,
- էլեկտրոնիկա, համակարգչային տեխնիկա,
- դեղորայք, օծանելիք և կենցաղային քիմիկատներ,
- սնունդ ,
- ալկոհոլ և ծխախոտ,
- և այլն

Չեն ապահովագրվում միայն օրենքով տեղափոխումը արգելվող բեռները, օրինակ՝ թմրանյութերը:

Ապահովագրությունը գործում է աշխարհի բոլոր երկրների տարածքում, բացառությամբ՝

- պատերազմական դրության մեջ գտնվող երկրների,

- այն պետությունների, որոնց նկատմամբ կիրառվում են ՄԱԿ-ի տնտեսական և/կամ ռազմական սանկցիաները,
- և տարածքների, որոնց սահմաններում պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերվել և ճանաչվել են համաճարակների օջախներ: